ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1–4-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը:

Ժողովին մասնակցելու նպատակով Մայր Աթոռ էին ժամանել ԳՀԽ ատենապետներ Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը, Կ. Պոլսո Պատրիարք Գարեգին արք. Գազանճյանը: Լիագումար նիստին մասնակցեցին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Ծիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արք. Բունիաթյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Աբրահամ վրդ. Մկրտչյանը, Վիրահայոց առաջնորդ Գևորգ արք. Սերայդարյանը, Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանը, Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանը, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Ասողիկ եպս. Արիստակեսյանը, ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, պրոֆ. Հակոբ Փափազյանը, պրոֆ. Պիոն Հակոբյանը, պրոֆ. Ռաֆայել Պապայանը, պրոֆ. Վլադիմիր Բարխուդարյանը, ինչպես նաև լիազոր անդամներ Գյուտ արք. Նագգաշյանը (Եվրոպա), Աղան արք. Պալիոզյանը (Ծայրագույն Արևելք), Զավեն արք. Չինչինյանը (Միջին Արևելք), Գիսակ եպս. Մուրադյանը (Հարավային Ամերիկա):

Եռօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին Մայր Աթոռի անցած վեց ամիսների գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը ամփոփ մի զեկույց տվեց՝ ներկայացնելով Մայր Աթոռի գործունեությունը հետևյալ գլխակարգումների տակ.

1. Վանական կյանք և Կաթողիկոսարանի ներքին գործունեություն, որի մեջ ընդգրկվում էին Միաբանության կազմի անդամների աճումը՝ յոթը նոր աբեղա հայրերով, Հոգևոր Ճեմարանի բարեհաջող ընթացքը՝ 90 ուսանողներով, Սևանի և Գյումրիի դպրանոցների գործունեությունը, Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի աշխատանքները, հրատարակչական գործը, թանգարանների վիճակը, վարչական կազմակերպական կյանքի վերանորոգումը, շինարարական աշխատանքները:

2. Արտաքին գործունեությունը, որի մեջ ներառնվեցին թեմերի միջև

հարաբերությունները, թեմական առաջնորդների այցելությունները, Վեհափառ Հայրապետի գլխավոր հովվապետական այցելությունները Ռումինիա, Օդեսա, Միացյալ Նահանգներ և Կանադա:

3. Հարաբերական կյանք, որի մեջ Նորին Սրբությունը ներկայացրեց նախ միջեկեղեցական հարաբերությունները, ապա անդրադարձավ պետական, դիվանագիտական հարաբերություններին՝ նշելով 16 երկրների դեսպանների, և Ռուսաստանի Դաշնության գիտության նախարարի, Անգլիայի, Գերմանիայի, Վրաստանի Արտաքին գործոց նախարարների, Վրաստանի Խորհրդարանի նախագահի այցելությունները: Նշվեց նաև մշակութային և մյուս շրջանակների հետ մշակված հարաբերությունները՝ թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանում:

Վերջում Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ առաջիկայում Ս. Էջմիածին են այցելելու Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերը և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Բ-ն: Իսկ մարտի 23-27-ը Ս. Էջմիածնում կգումարվի մի միջազգային եկեղեցական ժողով, «Կլոր սեղան» անվանումով՝ ուսումնասիրելու Հայաստանին ընձայվելիք օժանդակության եղանակները ու պայմանները:

Ժողովի օրակարգի հարցերի շարքում նկատի առնվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Կիլիկյան Կաթողիկոսական Աթոռի միջև հարաբերությունների զարգացման ընթացքը, Մայր Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսության համար Կանոնադրության մշակման անհրաժեշտությունը: Որոշվեց կազմել մի հանձնախումբ՝ առաջիկա ամիսներին այդ գործին լծվելու համար:

Քննարկվեցին թեմական ներքին խնդիրներ, Հայաստանի և ԱՊՀ երկրների թեմական կառույցների վերանորոգման անհրաժեշտությունները: Հանձնախումբ կազմվեց այդ ուղղությամբ անմիջապես գործի անցնելու համար:

Խորհրդակցության առարկա դարձան նաև՝

ա. Միջեկեղեցական հարաբերությունների զարգացման կարելիությունները,

բ. Հայ Եկեղեցու բերելիք բաժինը «Հայաստան» համահայկական հիմնադրամին,

գ. Մեծի Պահոց շրջանում պսակադրության արգելման պարագան,

դ. Մայր Աթոռի 1995 թվականի իրականացրած բյուջեն:

ե. Որոշվեց Մյուռոնօրհնեք կատարել Ս. Էջմիածնում առաջիկա սեպտեմբերի 8-ին:

***

Ժողովի ավարտին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներն այցելեցին Հայաստանի Հանրապետության վսեմաշուք նախագահին՝ պրն. Լևոն Տեր-Պետրոսյանին, որը սիրով ընդունեց նրանց նախագահական պալատում:

Գարեգին Ա Կաթողիկոսը Նորին Վսեմությանը ներկայացրեց ժողովա-

կանՆերին և ամփոփ մի վերլուծում տվեց ժողովի նիստերում կատարված աշխատանքների մասին:

Նախագահը լայն հասկացողությամբ իրազեկ դարձավ մեր Եկեղեցու այժմյան կացությանը և խոր վերլուծումներով նշեց այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ Եկեղեցին կոչված է մեծ դեր կատարելու՝ մեր ժողովրդի կյանքի առողջ դաստիարակության, Եկեղեցու միության գործնական քայլերով զարգացման անհրաժեշտության, «Հայաստան» հիմնադրամին կենսական օգտակարության և Ղարաբաղի ժողովրդի կյանքի պայմանների բարելավման տեսանկյուններից:

***

Ժողովը փակվեց երկուշաբթի, երեկոյան ժ. 6.30, Վեհափառ Հայրապետի խրախուսիչ պատգամով: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր անդամներին իրենց գործուն մասնակցության համար, կոչ ուղղեց ժողովին՝ սերտ գործակցության, Մայր Աթոռի ընդհանրական շահերը գերադասելու և առավել եռանդուն գործունեության լծվելու համար:

«Պահպանիչ» աղոթքով ավարտվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովը, որը վստահաբար պիտի նոր մղում տա Մայր Աթոռի և թեմերի գործունեությանը առավել պտղալից աշխատանքների համար:

***

Մարտի 6–ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, իր աշխատանքներն սկսեց Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700–ամյակի կենտրոնական հանձնաժողովի Գործադիր մարմնի անդրանիկ նիստը: Բացելով այն Վեհափառ Հայրապետն ընդգծեց 1700–ամյակի տոնակատարության բացառիկ կարևորությունը և հույս հայտնեց, որ Գործադիր մարմնի աշխատանքն այդ ուղղությամբ կլինի արդյունավետ: «Միայն չխոսինք, – պատգամեց Նորին Սրբությունը, – այլ 1700–ամյակը խոսեցնել տանք» :

Նիստի ընթացքում քննարկվեցին տոնակատարության կազմակերպման, այդ ծրագրին ՅՈՒՆԵՍԿՕ–ի մասնակցության, ֆիլմերի պատրաստության, Հայ Եկեղեցու պատմության ձեռնարկների հրատարակմանը, գիտաժողովների անցկացմանն առնչվող հարցեր:

ՏՏՏ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»

1996 թ. մարտի 23-ից 27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի օրհնությամբ և հյուրընկալությամբ գումարվեց Հայաստանյան «Կլոր սեղանը», որը կազմակերպվել էր Հայ Առաքելական Եկեղեցու, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի չորրորդ բաժանմունքի և Եվրոպական Եկեղեցիների միջեկեղեցական ծառայության համատեղ ջանքերով:

Եկեղեցու, Հայ Ավետարանական Եկեղեցու, Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների Եկեղեցու, տեղական և միջազգային կազմակերպությունների, Եկեղեցու հետ առնչվող միջազգային հիմնարկությունների, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի և Եվրոպական Եկեղեցիների համաժողովի 40-ից ավելի ներկայացուցիչներ, որոնք ժամանել էին Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Մեծ Բրիտանիայից, Դանիայից, Գերմանիայից, Շվեյցարիայից, Բելգիայից, Ռումինիայից և Չեխիայից:

ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Ժողովի բացումը տեղի ունեցավ շաբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին՝ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ: Բացման աղոթքից հետո այն

սկսվեց Նորին Սրբության խոսքով: Այնուհետև Վեհափառ Հայրապետն ընթերցեց իր պատգամը, ուր հանգամանորեն և վերլուծաբար ներկայացրեց Հայ Եկեղեցու դերը ներկա շրջանում: Վեհափառը մատնանշեց այն բոլոր բնագավառները, որոնք առաջնահերթ կարիքը ունեն Եկեղեցու անմիջական զորակցության և ծառայության, ինչպես նոր հոգևորականների պատրաստության գործը, քրիստոնեական դաստիարակության մարզը, դպրոցականների կրոնական կրթության աշխատանքները, հին եկեղեցիների նորոգության և նոր եկեղեցիների կառուցման անհրաժեշտությունը և ճարտարարվեստի փոքր ճյուղերի զարգացումը:

Զերոլ Էյբլը ներկայացրեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործունեությունը : 1993 թվականից հետո կատարված աշխատանքներին անդրադարձավ Մայր Աթոռի դիվանապետ Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը: Տիկ. Թենի Սիմոնյանը խոսեց դատարակչական գործի մասին, որն ընդգրկում է ամբողջ Արևելյան Եվրոպայի տարածքը:

Ելույթներ ունեցան՝ Հայաստանի Հանրապետության Սոցիալական Ապահովության նախարար Ռաֆայել Բագրյանը, Արտաքին Գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը, Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը, Կանանց Հանրապետական Խորհրդի նախագահ Նորա Հակոբյանը, թեմական առաջնորդներ, Հայ Օգնության Ֆոնդի, Հայ Օգնության Միության, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Հայկական Ասամբլեայի, «Շեն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները:

«Կլոր սեղանը» նշանակեց ներկայացուցչական համակարգող պատասխանատու մարմին, որի պարտականությունն է տևական կապ պահպանել ժողովի մասնակիցների հետ և համակարգել աշխատանքները: Ժողովի ատենապետներն էին Մայր Աթոռի կողմից Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Եկեղեցիների

Համաշխարհային Խորհրդի կողմից՝ Տիկ. Քերոլ Էյբլը:

Ելույթ ունեցողները ժողովի մասնակիցների ուշադրությունը սևեռեցին գործունեության երեք հիմնական բնագավառների վրա: Առաջին՝ մասնակից եկեղեցիների և կազմակերպությունների ներկայացում, երկրորդ՝ հայ իրականության ներկայացում ու բացատրություններ և երրորդ՝ «Կլոր սեղանի» կողմից իրագործվելիք ծրագրերի և նախաձեռնությունների, առաջարկությունների՝ ներկայացում և քննարկում:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Մարտի 24-ի կիրակի օրը, Սուրբ Պատարագից հետո, ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին մի շարք այցելություններ: «Կլոր սեղանի» ներկայացուցիչների մի մասը մասնակցեց Հայ Ավետարանական և Մկրտական եկեղեցիների պաշտամունքներին, ծանոթացավ Երևանում և նրանից դուրս իրականացվող կրթական ու եկեղեցական ծառայական նախաձեռնություններին:

Խմբի համար բավականին բովանդակալից անցավ Հոգևոր Ճեմարանի սաների հետ կազմակերպված քննարկումների ու երաժշտության երեկոն, որն սկսվեց Հանրապետության օրհներգով: Հակիրճ խոսքով ներկաներին հոգևոր ճեմարանի պատմությանը, ներկային ու ապագա խնդիրներին ծանոթացրեց ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը:

Այնուհետև սաների կատարմամբ հնչեցին Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի», Ռ. Պատկանյանի «Լռեց», Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ», Մ. Եկմալյանի «Ով հայոց Աստված», Ալ. Հարությունյանի «Սասունցիների պարը» ստեղծագործությունները: Հանդիպման երեկոն ավարտվեց Հոգևոր ճեմարանի հիմներգով:

Խմբի մյուս անդամները, հանձինս Սալոմե Ծմիդտի, Ցորգեն Ցորգենսենի, Ջոն Թեյլորի, Ալեքսանդր Բելոպոպսկու և Թենի Սիմոնյանի, մասնակցեցին քաղաքի Կորյունի անվան դպրատանն անցկացվող կիրակնօրյա վեց վարժարանների սաների համատեղ հանդիսությանը:

Հյուրերի թվում էին Ֆրանսիական «Ֆորում» ընկերության Երևանյան գրասենյակի տնօրենը և գրասենյակի սփյուռքահայ պաշտոնյաներ: Հանդիսությանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբաններ, հյուրեր, ծնողներ:

«Տերունական աղոթք»-ի երգեցողությունից հետո, ներկաներին ողջույնի ու բարիգալստյան խոսք ասաց Հայաստանյայց Եկեղեցու Քրիստոնեական Քարոզչության և Դաստիարակության Կենտրոնի տնօրեն հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը:

Գեղեցիկ հայտագրի ընթացքում, որը կրում էր «Վասն Հայրենեաց և վասն հաւատոյ» խորագիրը, հնչեցին ազգային-հայրենասիրական երգեր, բեմականացված հատվածների միջոցով ներկայացվեցին հայոց պատմության տարբեր դրվագներ:

«Հայրապետական մաղթերգի» կատարմամբ եզրափակվեց գրական-

գեղարվեստական հանդիսությունը:

Հավարտ հանդիսության ներկաներին շնորհակալության և սրտի խոսք ասաց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Անգլիայի ներկայացուցիչ Ալեքսանդր Բելոպոպսկին:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Երկուշաբթի, երրորդ օրը, ժողովը շարունակեց ընդհանուր քննարկումները, հընթացս որոնց հիմնական շեշտը դրվեց Հայաստանի եկեղեցիների կարիքների, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրողությունների վերլուծության վրա:

Հանդիպման մի զգալի մասը տրամադրվեց 1993 թվականի առաջին «Կլոր սեղանից» հետո կատարված աշխատանքների հաշվետվություններին, տեղական մասնակիցների կողմից ներկայացվող նոր ծրագրերին ու նախագծերին: Առաջարկվող նախագծերի համար ներկայացվեցին ընդհանուր բյուջեներ և դիմումներ: Դրանից հետո «Կլոր սեղանի» քննարկումները շարունակվեցին փոքր խմբերում: Որոշվեցին գործունեության հիմնական ծրագրերը և դասակարգվեցին ըստ առաջնահերթության: Առաջնահերթ համարվեցին հետևյալները. քանի որ Հայաստանի բնակչության զգալի մասը դեռևս համարվում է անապահով, ուստի անհրաժեշտ է կազմակերպել մարդասիրական և բժշկական օգնություններ այնպիսի ձևերով, որոնք նախ կբավարարեն անապահով խավերի առաջնահերթ կարիքները, միաժամանակ խթան կհանդիսանան հասարակության կայունացման գործընթացին: Առաջնահերթ համարվեց նաև եկեղեցական ծառայական օժանդակությունը, որի առնչությամբ Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասաց. «Այսօր Եկեղեցին կոչված է սպասավորներին զինելու մի նոր ըմբռնմամբ, որը հիմնված կլինի ոչ այնքան գոյատևելու գաղափարի, որքան խրատելու, սովորեցնելու և լուսավորելու վրա»:

Ներկաներին հիշեցվեց նաև, որ Հայաստանում համայնքի կենտրոնը տեղական Եկեղեցին է: Սակայն եկեղեցիներից մեծ մասը լուրջ վերանորոգումների կարիք ունեն: Ուստի պատմական եկեղեցիների վերականգնումը և պաշտամունքի նոր վայրերի հիմնումը մնում է առաջնահերթ խնդիր:

Հետմիջօրեին ժողովի մասնակիցները եղան Մայր Աթոռի տպարանում, ծանոթացան աշխատանքներին, ծրագրերին ու դժվարություններին, ստացած տպավորություններն ու կարծիքները կիսեցին տնօրենի հետ: Նա իր հերթին ներկայացրեց սարքավորումների տեխնիկական վիճակը, դրանց հետ առնչվող հարցերը:

Օրվա երկրորդ կեսին «Կլոր սեղանի» մասնակիցները եղան Ծիծեռնակաբերդում, աղոթեցին 1915 թ. ցեղասպանության զոհերի հիշատակի համար և ծաղկեպսակ դրեցին հուշահամալիրին:

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Ժողովի չորրորդ օրը, մարտի 26-ին, քննարկվեցին ներկայացված անհատական նախագծերի մանրամասները և ֆինանսական աղբյուրների ճշտման անհրա-

ժեշտությունը: Մասնակիցները համաձայնվեցին, որ հետագայում «Կլոր սեղանի» համագործակցությանն իրենց մասնակցությունը բերեն Առաքելական կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները:

Քանի որ այս օրը ժողովի քննարկումների վերջին օրն էր, «Կլոր սեղանը» նշանակեց ներկայացուցչական համակարգող պատասխանատու խումբ, որը ղեկավարելու է հետագա աշխատանքները մինչև հաջորդ «Կլոր սեղան»:

Մասնակիցները համաձայնեցրեցին նաև Հայաստանյան «Կլոր սեղանի» հիմնական խնդիրները:

ՏԱՐԲԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ժողովից հետո նրանք այցելեցին Երևանի շրջակայքում գտնվող տեղահանվածների համար հատկացված նորակառույց թաղամաս, որը աղջիկների քույրական դասընթացների քոլեջ, «Զատիկ» որբանոց:

Մարտի 27-ի չորեքշաբթի օրը «Կլոր սեղանի» մասնակիցների մի մասը վաղ առավոտյան մեկնեց Գյումրի և Սպիտակ՝ 1988 թվականի ողբերգական երկրաշարժից տուժած գոտի, ուր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի օժանդակությամբ կառուցվում է էկումենիկական եկեղեցի:

Օրվա երկրորդ կեսին նրանք այցելեցին Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցի, ուր հընթացս երեկոյան ժամերգության Վեհափառ Հայրապետը Մեծ Պահքի առիթով իր հերթական պատգամ-դասախոսությունն էր տալիս:

Ավելի ուշ ժողովի մասնակիցներին ընդունեց ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը:

Այս հանդիպումներով էլ ավարտվեց Հայաստանյան «Կլոր սեղանի» երկրորդ ժողովը, որը կազմակերպվել էր Հայ Առաքելական Եկեղեցու, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Չորրորդ բաժանմունքի և Եվրոպական Եկեղեցիների միջեկեղեցական ծառայության համատեղ ջանքերով:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ